տի անդամների արտակարգ մի ժողով, որը միաձայնութեամբ ընդունեց բողոքի հետեւեալ հեռագիրը, որ և ուղարկեց անմիջապէս. «Բրեստ-Լիտովսկ՝ հաշտութեան խորհրդաժողովին, Պետրոգրադ՝ Սովնարկոմին, Լոնդոն, Փարիզ, Ուաշինկթոն, Հռովմ, Թոքիո, Կ. Պոլիս, Բերլին, Վիէննա՝ արտաքին գործոց նախարարներին, Քիւ՝ կենտրոնական Ռադային, Օդեսա՝ Սովդեպին. — Համաձայն Սէյմի վճռի, անդրկովկասեան կառավարութեան, Անդրկովկասին և նրա սահմաններին վերաբերող ամէն մի դաշնագիր, որ կնքւում է առանց իր դիտութեան ու մասնակցութեան, համարւում է զուրկ միջազգային արժէքից և պարտաւորեցուցիչ ուժից իրեն համար: Այսու յայտնւում է նաև ի դիտութիւն հանրութեան, որ Անդրկ. Սէյմը արդէն ընտրել է հաշտութեան պատուիրակութիւն, որը, ըստ Թիւրքիայի հետ կայացած նախնական համաձայնութեան, պատրաստւում է մեկնել Տրապիզոն վերջնական հաշտութիւն կնքելու նպատակով»:

Որոշ վարանումից ու սպասումից յետոյ, պատուիրակութիւնը մեկնեց Թիֆլիսից և փետր. 23-ին արդէն Տրապիզոնի նաւահանգստում էր: Տեղ հասնելուն պէս հաղորդեց Պոլիս, որ սպասում է Թիւրքական պատուիրակութեան, սակայն, մի քանի օր պատասխան չեկաւ, և անդրկ. պատուիրակութիւնը մնաց նաւի վրա, առանց ցամաք իջնել կարողանալու, անորոշ վիճակի մէջ, բոլորովին կտրւած աշխարհից:

Միայն փետր. 27-ին, Տրապիզոն հասաւ Թիւրքական պատուիրակութիւնը, որ բաղկացած էր 5 անդամից, նախկին ծովային նախարար Ռէուֆ բէյի նախագահութեամբ, և նոյն օրը անդրկովկասեան պատուիրակութիւնը նաւից իջաւ ցամաք: Մի քանի նախնական բանակցութիւններից յետոյ, հաշտութեան խորհրդաժողովը բացւեց մարտ 1-ին և հէնց առաջին նիստում պարզւեց, որ կողմերը եկել էին ներհակ ծրագրներով և խօսում տարբեր լեզուներով: Բանալով նիստը՝ Ռէուֆ բէյը արտասանեց ողջոյնի հետեւեալ ճառը. «Երախտապարտ եմ երկնքին, որ ինձ առիթ ընծայեց իմ երկրի և իմ պաշտօնակիցների անունից դիմելու բարեմաղթական խօսքերով անդրկովկասեան ժողովուրդների յարգելի ներկայացուցիչների գալստեան առթիւ, Անդրկովկասի՛, որը, ցարիզմի անկումից յետոյ, հետզհետէ շարժւում է անկախութեան ճանապարհով. պատիւ ունեմ դիտել այս թանգագին դէպքը, իբրև իմ կեանքի ամենահաճելի ուրախութիւններից մէկը: Ողջունելով այսօր յանձին ձեր ձեր երկիրը, բնաւ ո՛չ միայն ծիսակատարութեան և դիւանագիտութեան աւանդութիւններին հետեւելու անհրաժեշտութիւնից դրդւած, ես աւելի շուտ ոգեւորւած եմ յարգանքի զգացմունքներով և աջակցելու բաղձանքով ա՛յն սրբազան գործին, որի ներկայացուցիչն էք հանդիսանում դուք: Քանի որ 200 տարուց ի վեր ցարիզմի դէմ մղած բոլոր մեր պատերազմները մեր երկրների համար ինքնապաշտպանողական պատերազմներ էին, ես կարծում եմ, որ մեր ընդհանուր ճակատագիրները աւելի և աւելի էին կապւում միմեանց այդ ընդհանուր փառաւոր պատմութեան ընթացքին: Ձեր ապրած վերջին շրջանը, որը, դժբախտաբար, արգելք եղաւ մեզ չօչափելի կերպով կատարել մեր պատմական պարտքը օգնելու ձեզ, մի շարք ծանր փորձութիւններով ապացուցեց մեր ճակատագրների այդ միութեան ամբողջ կարեւորութիւնը: Ցամենայն դէպս, ես համոզւած եմ, որ մենք ամենքս այստեղ մեզ բաժանող արգելքի խորտակումը համարում ենք մեզ համար աւելի կարեւոր երեւոյթ, քան ամենամեծ դիւանագիտական յաջողութիւնները, որովհետև մեզ շաղկապող կապերը հանդիսանում են ո՛չ միայն սոսկ